

## ՏԱՌԱՊԱՆՔԻ ՃԱՄՓԱՆԵՐՈՎ



**ՎԱՐԱՉԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,**

**ՀՀ ԳԱՍ ակադեմիկոս**

«Որբի հայրենիք, ողբի հայրենիք», գրում էր մեծն Թումանյանը 1915-ին: Եվ իրոք, Մեծ եղեռնից եւ հայաշխարհում դրան հետեւած ահեղ ցնցումներից հետո, Հայաստանում, ըստ որոշ տվյալների, հավաքվել էին շուրջ 300 հազար որբեր: Նրանց այն մասը, որն այդ դաժան տարիներին սովին, հիվանդություններին դիմացավ եւ մի կերպ գոյատևեց, դարձավ ազգաբնակչության ողնաշարը ու հետագայում՝ Նոր Հայաստանի կերտողը: Գժվարին կյանք ապրած, ժամանակից շուտ հասունացած այդ սերունդը հայրենակերտման առաջամարտիկը դարձավ, առանց որի անհնար է պատկերացնել հայկական պետականությունը: Որբերի այդ սերնդից է մեր մեծավաստակ գիտնական ճարտարապետը՝ Վարազդատ Հարությունյանը, որի հողվածը հաճույքով տպագրում ենք Հայաստանի անկախության 16-րդ տարեդարձի առթիվ:

Այն երկարակյացներից եմ (կանգնած 99 տարվա շեմին), որ ժամանակակիցը եղա իմ հարազատ ժողովրդի կյանքում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների: 1915-ի հուլիսին թողեցինք մեր տունն ու այգին Վանի Այգեստանում, դուրս եկանք գաղթի մահաբեր ճամփան, ուղղություն վերցնելով դեպի ավետյաց երկիր՝ Արեւելյան Հայաստան: Վանեցիները ողջ թուրքահայության հետ տեղահանվելով, ցրվեցին աշխարհով մեկ, այս ու այն

երկրներում հիմնեցին մեծ ու փոքր համայնքներ, կազմակերպվեց այսպես կոչված, սփյուռքը:

Թեև վեց տարեկան էի, հիշողությանս մեջ են մնացել թուրքերի ու քրդերի հարձակումները Բանդի մահու կամրջով ու Բերկրիի կիրճով անցնելիս: Շատ ավելի կլիներ զոհերի թիվը, եթե գաղթականներին չուղեկցեին ռուսական նահանջող զորամասերը: Ճանապարհին մահացած հիվանդներին ու ծերերին թաղում էին հապշտապ փորած գերեզմաններում...1

Երբ հոգնաբեկ ու սոված հասանք Իգդիր, Հայկական բարեգործական ընկերությունն այնտեղ կազմակերպել էր գաղթականների խնամքն ու կերակրումը, գլխավորությամբ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի:

Երբ Արաքս գետի վրա ձգված կամրջով անցանք ձախ ափ ու Արարատյան դաշտով քայլելով հասանք Սուրբ Էջմիածնի տաճարի բակը, տեսածս սրտումս մնաց որպես անբուժելի վերք...

Բազմահազար գաղթականներով լեցուն էին բակը, լճի ափամերձ ու արհեստական անտառի տարածքները: Մոլեգնում էին տիֆն ու խոլերան... Դիակները սայլերով փոխադրվում էին դաշտերն ու թաղվում:

Եղբայրս՝ Գուրգենը եւ ես նույնպես հիվանդ էինք տիֆով, ես պառկած էի Գետրգյան ճեմարանի կլոր դահլիճի հատակին, Գուրգենը որպես ծանր հիվանդ պառկած էր մասնավոր տներից մեկի սենյակում:

Ամեն այցելությանը Գուրգենը խնդրում էր.

- Շուտ-շուտ եկեք, կարոտում եմ...

Իմ հերթական այցելության ժամանակ, երբ մտնելու էի հիվանդասենյակ, սանիտարները սավանի մեջ փաթաթած ինչ-որ ծանրոց էին դուրս տանում հիվանդասենյակից: Նայեցի Գուրգենի մահճակալի կողմը, դատարկ էր...

- Ո՞ր է իմ Քուրքեն եղբայրը,- լացակումած հառաչեցի:

- Եղբորդ նոր տարան սանիտարները,- պատասխանեցին:

Վազեցի սանիտարների հետեւից, որոնք եղբորս տարան տան նկուղը: Սարսափահար եղա տեսնելով այնտեղի դիակները, հոնգուր-հոնգուր լացելով դուրս փախա:

Ահա այդպես մեր գաղթական ընտանիքը տվեց իր առաջին զոհը...

Տեղյակ չեմ, կա՞րողյոք թեկուզ մոտավոր տվյալ գաղթից հետո նոր ափերը հասած ու մահացած գաղթականների մասին: Եթե կա, ուրեմն պիտի գումարվի մեկ եւ կես միլիոնին:

Հայրս՝ քարզի<sup>2</sup> Մարտիրոսը, նախագգալով, որ նույն ճակատագիրն է ունենալու իր ընտանիքը Էջմիածնում, որոշեց մեզ փոխադրել Թիֆլիս, որտեղ ազգականներ ունեինք, Վանում 1885-96 թվականներին տեղի ունեցած առաջին կոտորածից փրկվածներից:

Ընտանիքով Թիֆլիս հասանք, ուր մեր Տեր-Հարությունյանի տոհմից ապրում էին երեք ընտանիքներ՝ մանրավաճառ Նշան աղան, գեղեցկադեմ ուսուցչուհի Վիկտորյան, հորեղբորս որդին՝ նավթավաճառ Սիրիդատը եւ կվասավաճառ հորեղբայրս՝ Մաթեոսը: Թեեւ ողջունեցին մեր գալը, սակայն միայն ավագ քույրս՝ Արաքսին, որը առողջ էր, հյուրընկալվեց մեկի տանը: Մնացածներին տեղավորեցին հիվանդանոցներում, մեծ եղբորս՝ Աղասուն, Գերմանական, իսկ հորս, մորս, եղբորս՝ Արծրունին, կրտսեր քրոջս՝ Սիրանուշին ու ինձ՝ Արամյանցի հիվանդանոցում: Բուժվում էինք, լավ սնվում, թվում էր, թե ամեն ինչ բարեհաջող է, սակայն այդպես չեղավ...

Մի անգամ, երբ մայրս հերթական այց էր կատարել հիվանդանոցի տղամարդկանց բաժինը, վերադարձավ հոնգուր-հոնգուր լալով...

Ասել էին, որ Մարտիրոս Տեր-Հայրապետյանը մահացել է, նրան քաղել են Թիֆլիսի հայկական՝ Խոջիվանքի գերեզմանատանը:

Ժողովրդական ասացվածք կա՝ կարկուտը ծեծած տեղն է ծեծում: Նորից հարագատի կորուստ, այն էլ կերակրող...

Որք N 204, Վարագրատ Տեր-Հայրապետյան, Վանից, 7 տարեկան: Այդպես են գրանցվել 1916-ին Թիֆլիսում հրատարակված «Համբավաբեր» տեղեկագրում, որի կազմողն ու խմբագիրը վանեցի գրող, լրագրող Ծերուն Թորգոմյանն էր, հետագայում հայոց լեզվի ու գրականության իմ ուսուցիչը: Որբանոցում հյուրընկալվեցինք եղբայրս՝ Արծրունը, քույրս՝ Սիրանուշը եւ ես:

Որբանոցում անցկացրինք շուրջ երեք տարի: Դա նոր ու անձանոթ միջավայր էր: Որբանոցը Թիֆլիսի Օրթաճալա կոչվող թաղամասից 6-7 կմ էր հեռու, Ծիրանավորի վանքի բակում: Եռահարկ շենքն իր ապակեպատ կողմով նայում էր ընդարձակ բակին, իսկ լուսամուտներով՝ շրջապատի կիրճին: Սնվում էինք, ինչպես ռուսն է ասում՝ «ՉՊՏՉՏսՖ», մանավանդ երբ ուխտավորները որբանոցին էին նվիրում գառներ, ոչխարներ, նույնիսկ հորթեր:

Արվում է որբերի ու դաստիարակների խմբանկարը: Ես ու եղբայրս՝ որբանոցի շենքի առաջ:

Որբանոցի գլխավոր «շեֆն» էր Ամենայն հայոց ամենահաս բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Հիշողությանս մեջ են մնացել

որբանոցի պատշգամբում (որը նաև մեր ճաշարանն էր) կազմակերպվող գրական-գեղարվեստական միջոցառումները, որոնց սովորաբար մասնակցում էր մեծ լոռեցին իր ուղեկիցների հետ: Մի անգամ ինձ էլ բաժին ընկավ, աթոռին կանգնած սկսեցի արտասանել.

- Գորտը գորտին կանչում է:

- Քերին մեռել է, քերին մեռել է...

Մնացածը մոռացել էի, լացակումած իջա աթոռից:

- Ոչինչ,- ասաց ժպտադեմ բանաստեղծը,- մյուս անգամ կիիշես...

Ելույթ ունեցավ որբանոցի «ձայնավոր» Հայրիկ Մուրադյանը.

*Թողել եմ ու եկել մըրքերս ու այգիս,*

*Քանի որ ախ կանես, կը քաղվի հոգիս,*

*Կռունկ, պահ մի կացիր, ձայնիկդ ի հոգիս,*

*Կռունկ, մեր աշխարհեն խաբրիկ մը չունի՞ս...*

Արտասանությամբ ելույթ ունեցավ սասունցի Վաղարշակ Երիցյանը (հետագայում՝ Նորենց): Հավարտ հերթական հանդիպման, որբերից ավագ Նորայր Դաբադյանը խորին շնորհակալություն հայտնեց հյուրերին այցելության, որբերի նկատմամբ ստանձնած խնամակալության համար: Տեղյակ էինք, որ բանաստեղծն ամեն ջանք գործադրել է թոքախտավոր որբ Սիիրան Թութունյանի բուժման համար եւ մասնակցել է նրա հուղարկավորությանը:

Ծիրանավոր վանքն ուներ «Ծիրանավորօբա» տոն: Այդ օրը վանքի բակն ու շրջակա ձորերը լցվում էին ուխտավորներով, ամենուրեք հնչում էին երգ ու երաժշտություն, նույնիսկ կրակոցներ.. Որբանոցի կառավարչուհի տիկին Եվգինե Չաքարյանը մեզ կարգադրում էր իսկույն մտնել շենք ու դռները փակում էր:

Կիրճի կողմը ուղղված լուսամուտներից դիտում էինք այնտեղի իրադարձությունները: Հարբած ուխտավորների միջեւ տեղի էին ունենում կատաղի կռիվներ: Միմյանց վրա էին հարձակվում մահակներով, դաշույններով, նույնիսկ ատրճանակներով:

- Էս էլ Ծիրանավորօբան, գոչեց որբանոցի պահակ Գեորգին,- տարի չի լինում, որ արյունով չվերջանա...

1916-17 թվականներին երկրի վիճակը վատթարացավ: Որբերս դա զգացինք մեր սեղանի ուտեստեղենի նվազմամբ: Չնայած դրան, երանի տվեցինք Ծիրանավորի վանքի մեր որբանոցին, երբ մեզ

փոխադրեցին Հավլաբարի թաղում գտնվող մի այլ որբանոց, որտեղ կատարյալ սով էր: Թերասնման պատճառով որբերից շատերը սկսեցին տառապել «հավկուրություն» կոչվող հիվանդությամբ:

Այլևս այնտեղ մնալն անհնար էր: Ես, եղբայրս՝ Արծրունը եւ քույրս՝ Սիրանուշը թույլտվություն ստացանք մեր հարազատներին այցելելու, սակայն մտադրվել էինք այլևս չվերադառնալ որբանոց:

Մեծ քաղաքի մի ծայրից հետիոտն մյուս ծայրը հասանք, սրան-նրան հարցնելով դժվարությամբ գտանք Արթեն (Հարություն) աղային, որը հանգրվանել էր իր որդու՝ Սիհրդատի տանը:

- Այ բալամ, ինչի՞ եք եկել, վո՞վ պիտի ձեզ պախի,- գոչեց հորեղբայրս:

- Ես կպախեմ իմ որբերին, Արթեն աղա, քեզ նեղություն չենք տա,- ասաց մայրս: Ու պահեց, վաստակելով սրա-նրա տներում լվացք անելով...

Թիֆլիսը լեցուն էր գաղթականներով, անուններս կնքվեցին գաղթականներ: Հայկական բարեգործական կազմակերպության ջանքերով Մանթաշովի անվամբ կոչվող նախկին քարվանսարայի շենքում տեղավորված «ճաշարանից» մինչեւ տուն էինք վերադառնում, նորից սովածանում էինք:

Մայրս, եղբայրս ու ես ապրում էինք Պաստերովսկայա թ.8 տան բակում մեզ տրամադրված կիսամութ ու փոքրաչափ մի սենյակում:

Вода, вода, родниковая, холодная... Գոչում էինք քայլելով Գոլովինսկայա (այժմ՝ Ռուսթավելու անվան) պողոտայով: Մի օր ոտքիս ինչ-որ բան կպավ: Կռացա, վերցրի պսպղուն իրը: Թվաց, թե արժեքավոր բան է: Իսկույն կուժս դատարկեցի ու հապշտապ տուն հասա, գտածս ցույց տվի մորս: Տարավ իմ հորեղբոր որդուն, ոսկերիչ Սիհրանին: Ուրախությամբ վերադարձավ գոչելով.

- Գտածդ ոսկի պատյանի մեջ մատիտի...


Տարիներ շարունակ ապրեցինք կարիքավոր կյանքով, համոզում էի մորս, որ վաճառի, ապրուստ ունենանք:

- Չէ,- պատասխանում էր մայրս,- Էսա կպախեմ, երբ տյու իտր արժանի լինես, քեզ կվերադարձնեմ: Վերադարձրեց 1964-ին, երբ ճարտարապետության դոկտորի աստիճանով վերադարձա Լենինգրադից: Նույն տարին սիրասուն մայրս հրաժեշտ տվեց իր տանջալից կյանքին:

1. Ավելի մանրամասն տես իմ «Կյանքիս քառուղիներում», Երևան, գիրք Ա 1999, էջ 10-14:

2. Թարգի- դերձակ:

## ՎԱՐԱՂԱՏ ՏԵՐՈՅԱՆ - ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉՆ ՈՒ ՓԱՅԼՈՒՆ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ



ՄԵԼԱՆՅԱ ԲԱՂԱԼՅԱՆ

37-ի խորհրդային սեւ վարչախմբի նահատակներից է Վարազդատ Տերոյանը՝ եվրոպական բարձր կրթությամբ փայլուն մտավորականը, ազգային նվիրյալ գործիչը: Նրա մասին առաջին անգամ լսեցի հրատարակիչ Մերգեյ Խաչենցից՝ որպես ազնիվ հայորդու, պայծառ մտքի տեր մարդու, որի կատարած թարգմանական գործը շատ բարձր գնահատեց. «Մարդը մեն-մենակ մի ամբողջ ինստիտուտի գործ է արել»:

Վարազդատ Տերոյանը հեղինակ է մի շարք գիտական-փիլիսոփայական աշխատությունների՝ «Բերգսոնի էվոլյուցիոն թեորիայի մասին», «Կանտի պրագմատիզմը», «Սոցիոլոգիայի տեղը փիլիսոփայության մեջ», «Պանգերմանիզմը եւ պատմափիլիսոփայությունը»: Ազգային մշակույթի զարգացման մեջ նա շատ է կարեւորել թարգմանական գրականության անհրաժեշտությունը, համոզված՝ որեւէ մշակույթի մտածողական շերտերին նոր որակ, տեսողություն ու խորք հաղորդող դրա նշանակության մեջ: Վ. Տերոյանը բնագրից թարգմանել է եվրոպական փիլիսոփայական մտքի այնպիսի նվաճումներ, ինչպես Ի. Կանտի «Զուտ բանականության քննադատությունը», «Պրոլեգոմեններ»-ը, Գեկարտի «Բննախտություն մեթոդի մասին», Սպինոզայի «Էթիկա»-ն, Հեգելի «Ոգու երեսութաբանությունը», Բերգսոնի «Ստեղծագործ էվոլյուցիան», Վինդեբանդի

«Փիլիսոփայության պատմություն»-ը, Հիպպոլիտ Տենի «Գեղարվեստի փիլիսոփայություն»-ը, այդ թվում նաև գեղարվեստական գրականություն՝ Անատոլ Ֆրանս՝ «Կարմիր շուշանը», Հ. Բարբյուս՝ «Կրակը», Բլասկո Իբանյեզ՝ «Պիեր դը Լյուն»։ Թարգմանչական աշխատանքների հետ մեկտեղ Տերոյանը կազմել, պատրաստել է հայերեն-գերմաներեն-ֆրանսերեն լեզուներով 22.000 բառ ընդգրկող փիլիսոփայական բառարան, մշակել է 80.000 բառանոց գերմաներեն-հայերեն բառարան, ծրագրում էր հայ փիլիսոփայական ընկերության հիմնադրում։

Ո՞վ է Վարազդատ Տերոյանը, որի անունը անգամ մեր մտավորական շրջանակներին քիչ է հայտնի։ Անցած տարի ԳԱԱ պատմության ինստիտուտը լույս է ընծայել Վ. Տերոյանի «Գիտական եւ հրապարակախոսական աշխատություններ» հատորը՝ Ռուբեն Սահակյանի ընդարձակ առաջաբանով եւ ծանոթագրություններով։ Գիտքը հրապարակման է պատրաստել հեղինակի դուստրը՝ Նունե Դերոյանը։ Հարկ ենք համարում կենսագրական տվյալներ եւ որոշ տեղեկություններ հայտնել մեր հանրությանը գրեթե անհայտ մտավորականի ազգանվեր գործունեության մասին։

Վ. Տերոյանը ծնունդով Վանից է՝ Այգեստան թաղամասից։ Արամ Մանուկյանի վկայությամբ, Վարազդատը Երամյան դպրոցի սան էր, իրենց եւ ուսուցիչների կապը, «թունդ դաշնակցական»։ Կրթությունը Տերոյանը շարունակել է Էջմիածնի Գեորգյան ճեմարանում, վերադառնալով Վան՝ ուսուցչությամբ է զբաղվել։ Վանեցիների օժանդակությամբ Տերոյանին հաջողվել է մեկնել արտասահման եւ ընդունվել Սորբոնի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետ, որից հետո ուսանել է գերմանական մի շարք համալսարաններում։ Փիլիսոփայության դոկտորական թեզի պաշտպանությունը չի հաջողվել՝ վրա հասած 1-ին աշխարհամարտի պատճառով։ Վերադառնալով Վան՝ շարունակել է դասավանդել, այս անգամ Կեդրոնական վարժարանում։ Հայոց ցեղասպանության օրերին թուրքական արևածոր յաթաղանի դեմ հայ ազգաբնակչության մղած ինքնապաշտպանական հերոսամարտերից առաջինը Վան-Վասպուրականինն էր՝ 1915-ի ապրիլին, որ հաղթանակով պսակվեց։ Վարազդատ Տերոյանը ազգային-քաղաքական շարժման կիզակետում էր, ընդգրկված էր «Հայկական Կարմիր խաչի» կազմում եւ ակտիվորեն զբաղվել է նահանգային վարչությանն ուղղված բնակչության խնդրագրերով։ Վան-վասպուրականցիների նահանջի օրերին գաղթականների մի մասի հետ Տերոյանը գալիս է Թիֆլիս։

Գաղթականությանը վերաբերող հարցերով ստեղծված կազմակերպություններում ազգանպաստ գործունեություն է ծավալում, Թիֆլիսում, Բաթումում, Արեւելյան Հայաստանում ապաստանած արեւմտահայ գաղթականների մասին վիճակագրական տվյալների հավաքչական կարեւոր աշխատանքներ կատարում: Հայաստանի Խորհրդայնացումից հետո Հեղկոմը նրան նշանակում է Ամերկոմում լիազոր, որտեղ տնօրինել է ուսումնական հաստատություններ, որբանոցներ, հիվանդանոցներ: 1930-31-ին աշխատել է Գրապալատում, որպես միջազգային գրքափոխանակման բաժնի վարիչ, ակտիվ գրքափոխանակում կազմակերպել Մխիթարյան միաբանության, սերտ հարաբերություն ստեղծել «Հանդէս ամսօրեայ»-ի հետ: Նա հատուկ ուշադրություն է դարձրել հայագիտական գրականություն Մխիթարյաններին առաքելու եւ փոխադարձաբար ուղարկվածը պահպանելու եւ «գիտական մշակման ենթարկելու» աշխատանքներին: Խորհրդային իշխանությունները, սակայն, Տերոյանի դաշնակցական անցյալը չէին մոռացել, որպես «անբարեհույս տարր» նա հեռացվել է գրապալատից: Ընտանիքի կեցությունն ապահովելու համար աշխատել է «Նոր ուղի» ամսագրում, Պետհրատում տեխնիկական եւ սրբագրական աշխատանքներ կատարել: Խորհրդային պետական մարմինները նրան 4 անգամ ազատազրկել են, 4-րդն արդեն ճակատագրական էր: Նա մեղադրվել է Թիֆլիսում Ջեմալ փաշայի սպանության մասնակցության, Ամերկոմում դաշնակցական գործունեություն ծավալելու, լրտեսության մեջ: Սեծ դժվարություններով եւ մի քանի ազդեցիկ մարդկանց աջակցությամբ (Ա. Մռավյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Խանջյան, որի ուսուցիչն է եղել) Տերոյանին հաջողվում է առաջին երեք (1922, 1924, 1931) ձերբակալություններից ազատվել՝ ապացուցելով իր անմեղությունը: Վերջին անգամ նրան մեղադրել են գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյանի միապետական հայացքների մասին ՆԳԺԿ-ին չտեղեկացնելու, դաշնակցական կազմակերպությունները վերականգնելու փորձերի, Լեռ Կամսարի, որի հետ մտերիմ է եղել, հակախորհրդային հայացքների համար: Դա 1935 թվականն էր: Ստալինյան հրեշավոր մեքենայի ամենակուլ երախի դեմ մարդկային ամեն բան անգոր էր, արդարացման որեւէ փորձ՝ դատապարտված: Տերոյանը 3 տարով աքտրվում է Սիբիր՝ աշխատանքային ուղղիչ ճամբար, որտեղից վերադարձ շատ քչերին է հաջողվել: 51

տարեկանում՝ 1938-ին Վարազդատ Տերոյանը մահանում է հեռավոր Մարիինսկում:

Ուեսթիլիտացիոն շարժման ժամանակ, 1956-ին համապատասխան որոշման համաձայն, Տերոյանի գործը կարճվել է հանցակազմի բացակայությամբ, վերականգնվել է նրա բարի անունը: Այս գործին իրենց աջակցությունն են բերել Գրիգոր Չուբարը եւ ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանը:

Վերոշարադրանքում թվարկված Տերոյանի գրական ծանրակշիռ ժառանգության շատ քիչ մասն է հրատարակւյնացված: Կենդանության օրոք լույս են տեսել երկու գործ, Հիպպոլիտ Տենի «Գեղարվեստի փիլիսոփայությունը» (1935)՝ առանց թարգմանչի անունը հիշատակելու, քանի որ նա ձերբակալված էր, եւ Հ. Բարբյուսի «Կրակը» (1935 թ.): Հետմահու տպագրվել են Ա. Ֆրանսի «Կարմիր շուշանը» (1946 թ.) եւ Դեկարտի «Քննախոսություն մեթոդի մասին» (1968): Եվ վերջինը՝ 2006-ին նրա գիտական եւ հրատարակախոսական աշխատություններն են՝ փիլիսոփայական տարբեր հասկացությունների, կատեգորիաների, հողվածներ՝ գաղթականությանը, դպրոցներին, դասագրքերին եւ այլ կարեւոր հարցերի վերաբերող:

Գրքի առաջաբանի տեղեկություններն ընդհանուր պատկերացում տալիս են Տերոյան հասարակական գործչի ու մտավորականի մասին: Ազգային ստրատեգիական խնդիրների նկատմամբ ունեցած Տերոյանի մի շարք մոտեցումներ արդիական են նաեւ մեր օրերի համար, ինչպես, օրինակ, հետեւյալը. «Պետք է ստեղծել ամենից առաջ հասարակական լուրջ, տեսական եւ ավանդապահ մի հսկողություն մեր բոլոր գործերի վրա, որոնք ազգային բնույթ են կրում: ... Դուրս պետք է մնան, հեռո՛ւ յոթ հորիզոններով բոլոր նրանք, որոնք հայ ժողովրդի կյանքի եւ ապագայի դարմանման գործին մոտենում են իբրեւ թերուսներ եւ սիրողներ: ...Հայտարարության համար, ռեկլամի համար գործող ինչքան անհատներ կան եւ ընկերություններ: Պինդ պիտի փակել նրանց առջեւ բոլոր դռները: ... Գործի սերը, պարտականության գիտակցությունը եւ հայ ժողովրդի ապագան դարբնելու սրբազան իդեալները պիտի լինեն միակ տեսակետները, որոնք վճռական եւ հրամայական նշանակություն են ունենալու»: 1916-ին գրված Վ. Տերոյանի այս խոսքերը, ինչպես տեսնում ենք, շատ բնորոշ են նաեւ մեր այսօրվա իրականությանը:

## Survivors



*born 1903, Pazmashen, Kharpert (Harpoot)*

### **HAYASTAN MAGHAKIAN - TERZIAN**

**M**y brother-in-law was American Consul Davis' body guard in Mezre and the consul himself saved my father's life. There was a Turkish gendarme by the name of Shadhe who wanted to kill my father. Consul Davis came all the way to our door in Pazmashen. My father was hiding in the back, in the wood shed. He came on his horse and took my father back with him to the consulate.

When the deportations began, I went to Mezre to say goodbye to my father. He cried. The consul saw him and told me to stay. Later, my mother escaped from the deportation and also came to the consulate. We were in the American consulate during the deportations. Consul Davis saved us. Everybody else, my sisters, my maternal aunt—all of them, all of them—were deported. Our whole village was wiped out.

We lived in the consulate until 1922. On September 7, 1922, our family left Kharpert along with 250 Armenian orphans on horses and wagons. My father was asked by the Near East Relief to oversee the transportation of these orphans from Kharpert to Aleppo.

From Aleppo we went to Beirut, then to Marseille and then by ship we came to Providence, Rhode Island.